Ընդհանուր տեղեկություններ

Նախագիծը մշակված է Երևան քաղաքի `<<Երևանի Սիամանթոյի անվան հ.162 հիմն. դպրոց>> ՊՈԱԿ-ի ներքին էլեկտրականության ցանցերի մոնտաժային աշխատանքների համար` համաձայն ճարտարապետա-շինարարական լուծումների, բոլոր տեխնիկական առաջադրանքների, պատվիրատուի կողմից տրված առաջադրանքների, և էլեկտրոտեխնիկական կանոնակարգի, NEC (National Electical Code), СП 31-110-2007 СНИП 67-78-ի հիման վրա:

Նախագծում ընգրկված են `

1.Ընդհանուր տեղեկությունները:
2.Օգտագործված պայմանական նշաների ցանկը:
3. Էլ. վարդակների, լուսատուների միացման սխեմաները:
4. Խմբային վահանակների ավտոմատ անջատիչների հասցեավորման աղյուսակները:
5. Օգտագործվող էլ. նյութերի մասնագիրը:

Ելնելով էլեկտրական բեռնվածքի հաշվարկի համար տրված տվյալներից` սնուցող էլ.վահանակների դրվածքային հզորությունը հեռանկարում կկազմի եռաֆազ 20 կՎտ: էլեկտրաէներգիայի բաշխումը կատարվում է խմբային էլ. վահանակների (LP) արկղերից, խմբային էլ. վահանակի մեջ տեղադրվում են միաբևեռ,եռաբևեռ ավտոմատ անջատիչները, ,հողանցման և զրոյական կոնտուրները:

Խմբային ցանցերը կառուցվում են պղնձե բազմաջիղ մալուխներով և հաղորդալարերով : Ներքին վարդակային ցանցերը կառուցել 3x4.0մմ և 3x2.5մմ, կտրվածքի պղնձե բազմաջիղ էլ. մալուխների միջոցով:
Ներքին լուսավորության ցանցերը կառուցել 3x1.5մմ, կտրվածքի պղնձե բազմաջիղ էլ. հաղորդալարերի միջոցով: դպրոցը սնող մալուխը անցկացնել հարկում գտնվող բաշխիչ վահանից

Վարդակները տեղադրել հատակից 1500մմ, անջատիչները տեղադրել հատակից 850մմ բարձրության վրա:
Խմբային էլ. վահանակը տեղադել հատակից 1500մմ բարձրության վրա:
Որպես պաշտպանիչ միջոցներ հարկավոր է միացնել գործող հողանցման ցանցին: